



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 14/21**

14.06.2021թ.

ք. Երևան

Քաղաքացի Վաղինակ Ավետիքի Մնացականյանը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 277-րդ հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին, 79-րդ և 81-րդ հոդվածներին՝ իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությամբ, որ գույքը ուրիշի ապօրինի տիրապետումից հետ վերադարձնելու վերաբերյալ պահանջը հանդիսանում է վինդիկացիոն հայց, իսկ բնակարանից վտարելու պահանջը՝ նեգատոր հայց:

Թիվ ԼԴ2/0138/02/19 քաղաքացիական գործի դատավարական նախապատմության համաձայն՝ Սասուն Սեյրանի Սիմոնյանը հայցադիմում է ներկայացրել ընդդեմ Վաղինակ Ավետիքի Մնացականյանի՝ ք. Ալավերդի, Խուղյակով փողոցի 62 տան հասցեի բնակարանը պատասխանող Վաղինակ Մնացականյանի ապօրինի տիրապետումից հետ վերադարձնելու և նրան գույքով հանդերձ բնակարանից վտարելու պահանջի մասին:

Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 26.03.2009թ. թիվ 2285849 վկայականի համաձայն՝ Ալավերդի քաղաքի Խուղյակովի փողոց թիվ 62 հասցեի բնակելի տան նկատմամբ գրանցված է Սասուն Սեյրանի Սիմոնյանի սեփականության իրավունքը: ՀՀ Լոռու մարզի Ալավերդու քաղաքային համայնքի «Թիվ 1 ԲՇՏ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 30.01.2019թ. տրված տեղեկանքի համաձայն՝ Ալավերդի քաղաքի Խուղյակով փողոց թիվ 62 տունը գտնվում է նախկին սեփականատեր Վաղինակ Մնացականյանի տիրապետության տակ, սակայն 2009թ. բնակարանը գնել է Սասուն Սիմոնյանը և հանդիսանում է այդ բնակարանի սեփականատեր:

Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 16.08.2019 թվականի վճռով հայցը մերժվել է՝ հայցային վաղեմության հիմքով:

Նշված վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Հայցվորի ներայացուցիչը:

ՀՀ վերաքննիչ դատարանի 19.12.2019 թվականի որոշմամբ բողոքը բավարարվել է, վճիռը մասնակի՝ բնակարանից վտարելու պահանջի մասով, բեկանվել է և գործն այդ մասով ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վերաքննիչ դատարանի որոշման մեջ վճռաբեկ բողոք է ներկայացրել պատասխանողի ներկայացուցիչը:

ՀՀ վճռաբեկի դատարանի 26.02.2020 թվականի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Դատարանի 27.03.2020 թվականի որոշմամբ գործն ընդունել է վարույթ:

Դատարանի 09.06.2020 թվականի վճռով՝ հայցվորին սեփականության իրավունքով բնակարանից պատասխանողին վտարելու պահանջի մասին հայցը բավարարվել է: Նշված վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել պատասխանողի ներկայացուցիչը, ինչի կապակցությամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը իր 02.11.2020 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է: Հիշյալ որոշման դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որպիսի բողոքի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը 10.01.2021 թվականին կայացրել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում:

Վերոնշյալ գործով վերաքննիչ դատարանի, ինչպես նաև ստորադաս դատարանների դիրքորոշումն այն է, որ չտիրապետող սեփականատիրոջ հայցն ընդդեմ տիրապետող ոչ սեփականատիրոջ՝ բնակարանից վտարելու պահանջով, հանդիսանում է նեգատոր հայց և, հետևապես, այդ հիմնավորմամբ հիշյալ պահանջի նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելի չէ:

Միաժամանակ, թիվ ԼԴ2/0138/02/19 քաղաքացիական գործով կայացված դատական ակտերի հիմքում ընկած է այն վերլուծությունը, որ բնակարանից վտարելու պահանջը և գույքը ուրիշի ապօրինի տիրապետումից հետո պահաջելու հայցապահանջը իրենց բնույթով և էությամբ տարբեր են և գույքը ուրիշի ապօրինի տիրապետումից հետո պահանջելու հայցը կարող է մերժվել, սակայն նույն հայցի մեջ մտնող և միևնույն փաստական և իրավական հիմքերն ունեցող՝ բնակարանից վտարելու պահանջը կարող է բավարարվել:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր 03.07.2019 թվականի թիվ ԵՄԴ/0462/02/13 քաղաքացիական գործով կայացրած որոշման պատճառաբանական մասի 10-րդ և 15-րդ պարբերություններում արձանագրել է հետևյալը. «Վինդիկացիայի միջոցով սեփականատերը, ինչպես նաև գույքի օրինական տիրապետողները ցանկանում են այլ անձի անօրինական տիրապետությունից բնեղենով հետ ստանալ այն գույքը, որի նկատմամբ զրկված են սուբյեկտիվ իրավունքներ իրականացնելու հնարավորությունից: Սեփականատիրոջ իրավունքի պաշտպանության հիմնական նպատակը իր գույքի վերադարձման միջոցով վերականգնել իր իրավունքը, որպեսզի հնարավորություն ունենա շարունակելու անօրինականութամբ ընդհատված իրավագործությունների իրականացումը:

... Վինդիկացիոն հայցը չտիրապետող սեփականատիրոջ հայցն է ընդդեմ տիրապետող ոչ սեփականատիրոջ: Սեփականատերն այս հայցի միջոցով առաջին հերթին պաշտպանում է իր տիրապետման իրավունքը, բայց տիրապետման իրավունքի հետ միասին պաշտպանում է նաև օգտագործման և տնօրինման իրավագործությունները:»:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանը իր 17.05.2019 թվականի թիվ ԱՎԴ/2295/02/18 քաղաքացիական գործով կայացված վճռի մեջ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ և 277-րդ հոդվածների մեկնաբանմանը, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Վինդիկացիայի դեպքում, այսինքն՝ սեփականություն հանդիսացող գույքի տիրապետումից զրկված լինելու դեպքում իրավունքի սուբյեկտը պետք է լինի սեփականատեր կամ այլ տիտղոսային իրավունքի կրողը՝ օրինական տիրապետողը: Նեգատոր հայցի դեպքում ևս պետք է առկա լինի սեփականության կամ այլ տիտղոսային իրավունքի կրող՝ օրինական տիրապետող: Այսինքն՝ սեփականատիրոջ իրավունքի խախտման հիմքով հայց ներկայացնողը պետք է լինի սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող:

Նշված վերլուծությունը տարածելով սույն գործի փաստերի վրա՝ դատարանը գտնում է, որ հայցվորը ներկայացրել է վինդիկացիոն հայց, այսինքն՝ հայցվորը, հանդիսանալով անշարժ գույքի սեփականատեր, զրկված է իր սեփականությունը տիրապետելու և օգտագործելու իրավագործությունից:»:

Վինդիկացիոն հայցի վերաբերյալ իրավական դիրքորոշումները՝ նեգատոր հայցի վերաբերյալ վերլուծության հետ համադրելու դեպքում Դիմողն առանձնացնում է այն հիմնական չափանիշը, որի հիման վրա յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է սահմանազատել նեգատոր հայցը վինդիկացիոն հայցից: Մասնավորապես, նեգատոր հայցի դեպքում գույքի սեփականատերը, ըստ էության, տիրապետում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, պարզապես երրորդ անձի կողմից կատարվում են այնպիսի գործողություններ, որոնք խոչընդոտ են ստեղծում տիրապետման և տնօրինման լիազորությունների լիարժեք իրականացման համար, իսկ վինդիկացիոն հայցը չտիրապետող սեփականատիրոջ հայցն է ընդդեմ տիրապետող ոչ սեփականատիրոջ:

Վերոգրյալի ամփոփմամբ, Դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 277-րդ հոդվածին տրվել են այն աստիճան հակասական մեկնաբանություններ, որոնց համատեքստում իրավունքի սուբյեկտը չի կարող կանխատեսել իր գործողությունների հնարավոր հետևանքները և դրան համապատասխան դրսևորել համաչափ վարքագիծ, բացի այդ վերոնշյալ վերլուծությամբ իրավունքի նորմերը կիրառվելու պարագայում կանխատեսելի չէ նաև իրավակիրառ մարմինների վարքագիծը, քանի որ նույնանման պահանջների դեպքում դրսևորվում են տարբեր մոտեցումներ, և պահանջները դասակարգվում են տարբեր կերպ:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 277-րդ հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին, 79-րդ և 81-րդ հոդվածներին՝ իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությամբ, որ գույքը ուրիշի ապօրինի տիրապետումից հետ վերադարձնելու վերաբերյալ պահանջը հանդիսանում է վինդիկացիոն հայց, իսկ բնակարանից վտարելու պահանջը՝ նեգատոր հայց:

Օրենսգրքի վիճարկվող դրույթի բովանդակությունը հետևյալն է.

Սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թեկուզև այդ խախտումները գուգորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետ:

Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝

Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝

1. *Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:*

2. *Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:*

Այսպես, Դիմողը վիճարկում է Օրենսգրքի 277-րդ հոդվածն առ այն, որ իրավակիրառ պրակտիկայում նշված նորմին տրվել են տարբեր մեկնաբանություններ, և տրված մեկնաբանությամբ գույքը ուրիշի ապօրինի տիրապետումից հետ վերադարձնելու վերաբերյալ պահանջը հանդիսանում է վինդիկացիոն հայց, իսկ բնակարանից վտարելու պահանջը՝ նեգատոր հայց:

Ուստի, անդրադառնանք նեգատոր և վինդիկացիոն հայցերի էությանը:

1. Նեգատոր հայցը, որպես սեփականության իրավունքի պաշտպանության միջոց, ուղղված է սեփականատիրոջ կողմից գույքի օգտագործման և/կամ փաստացի տիրապետման իրավունքների իրացման խոչընդոտների վերացմանը: Նեգատոր հայցի ներկայացման հնարավորություն առաջանում է այն դեպքում, երբ գույքի սեփականատերը և երրորդ անձը վիճելի գույքի առնչությամբ չեն գտնվում պարտավորական հարաբերությունների մեջ, և երբ թույլ տրված իրավախախտումը չի հանգեցրել գույքի նկատմամբ սեփականության սուբյեկտիվ իրավունքի դադարման:

Նեգատոր հայցի ներկայացման դեպքում միաժամանակ պետք է առկա լինեն հետևյալ երկու պայմանները.

1) հայցվորը հայցի հարուցման պահին պետք է լինի գույքի սեփականատեր կամ այլ օրինական (տիրոջ սպային) տիրապետող,

2) հայցի ներկայացման պահին պետք է առկա լինի երրորդ անձի կողմից թույլ տրված այնպիսի գործողություն կամ անգործություն, որը խոչընդոտի գույքի սեփականտիրոջը կամ օրինական (տիրոջ սպային) այլ տիրապետողին օգտագործել և/կամ տնօրինել գույքը:

2. Վինդիկացիայի միջոցով սեփականատերը, ինչպես նաև գույքի օրինական տիրապետողները ցանկանում են այլ անձի անօրինական տիրապետությունից բնեղենով հետ ստանալ այն գույքը, որի նկատմամբ զրկված են սուբյեկտիվ իրավունքներ իրականացնելու հնարավորությունից: Սեփականատիրոջ իրավունքի պաշտպանության հիմնական նպատակը՝ իր գույքի վերադարձման միջոցով իր իրավունքը վերականգնելն է, որպեսզի հնարավորություն ունենա շարունակելու անօրինականությամբ ընդհատված իրավագործությունների իրականացումը:

Վինդիկացիոն հայցի սուբյեկտը գույքի անօրինական տիրապետողն է, իսկ օբյեկտը՝ անհատապես կամ տեսականիշներով որոշվող գույքն է, որը գտնվում է ուրիշի ապօրինի տիրապետության ներքո, իսկ որպես պատասխանող սույն հայցատեսակով կարող է լինել միայն գույքի փաստացի տիրապետողը, որի տիրապետման անօրինականությունը պետք է ապացուցվի վինդիկացիայի ընթացքում:

Վինդիկացիոն հայցի առարկան նյութաիրավական պահանջն է, որը տվյալ դեպքում կարելի է բաժանել 2 մասի՝

1. ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը վերադարձնելու և

2. գույքը տիրապետելու իրավունքի հետ ստացումը և վերադարձը դրա օրինական սեփականատիրոջը կամ տիրապետողին:

Վինդիկացիոն հայցի առարկայի նման բաժանման հիմնական նպատակը գույքի փաստացի տիրապետման վերականգնումն է, որն իրականացվում է երկկազմ գործողության միջոցով, այն է՝ գույքի վերադարձ և գույքի փոխանցում օրինական սեփականատիրոջը:

Վինդիկացիոն հայց հարուցելիս հայցվորն իրականում գրկված չէ իր սեփականության իրավունքից, այլ ուղղակի գրկվել է գույքը լիարժեքորեն տիրապետելու հնարավորությունից:

Վինդիկացիոն հայցը չտիրապետող սեփականատիրոջ հայցն է ընդդեմ տիրապետող ոչ սեփականատիրոջ: Սեփականատերն այս հայցի միջոցով առաջին հերթին պաշտպանում է իր տիրապետման իրավունքը:

Այսինքն, վերոգրյալից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ նեգատոր հայցը ներկայացվում է այն դեպքում, երբ անձն իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ պահպանում է տիրապետման իրավունքը, սակայն գրկված է գույքն իր ցանկությամբ օգտագործելու և տնօրինելու իրավագործություններից, իսկ վինդիկացիոն հայցի դեպքում հակառակը՝ գույքի սեփականատեր հանդիսացող անձը գրկված է գույքի փաստացի տիրապետման հնարավորությունից: Ընդ որում, նեգատոր հայց ներկայացնելու դեպքում վաղեմության ժամկետը չի գործում՝ համաձայն Օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետի, իսկ վինդիկացիոն հայց ներկայացնելու դեպքում գործում է վաղեմության ընդհանուր ժամկետի պահանջը:

Ինչ վերաբերում է թիվ ԼԴ2/0138/02/19 քաղաքացիական գործին, ապա սույն գործով Սասուն Սեյրանի Սիմոնյանը հայցադիմում է ներկայացրել ընդդեմ Վաղինակ Ավետիքի Մնացականյանի՝ ք. Ալավերդի, Խուղյակով փողոցի 62 տան հասցեի բնակարանը պատասխանող Վաղինակ Մնացականյանի ապօրինի տիրապետումից հետ վերադարձնելու և նրան գույքով հանդերձ բնակարանից վտարելու պահանջի մասին:

Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 26.03.2009թ. թիվ 2285849 վկայականի համաձայն՝ Ալավերդի քաղաքի Խուղյակովի փողոց թիվ 62 հասցեի բնակելի տան նկատմամբ գրանցված է Սասուն Սեյրանի Սիմոնյանի սեփականության իրավունքը: ՀՀ Լոռու մարզի Ալավերդու քաղաքային համայնքի «Թիվ 1 ԲՇՏ» ՓԲ ընկերության կողմից 30.01.2019թ. տրված տեղեկանքի համաձայն՝ Ալավերդի քաղաքի Խուղյակով փողոցի թիվ 62 տունը գտնվում է նախկին սեփականատեր Վաղինակ Մնացականյանի տիրապետության տակ, սակայն 2009թ. բնակարանը գնել է Սասուն Սիմոնյանը և հանդիսանում է այդ բնակարանի սեփականատեր:

Հայցվորի այն փաստարկը, որ հայցադիմումով ներկայացվել է գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ վերադարձնելու պահանջ, իսկ ապօրինի տիրապետողին իր գույքով հանդերձ բնակարանից վտարելու պահանջը հանդիսանում է որպես

հետևանք, ապա փաստենք, որ թիվ ԼԴ2/0138/02/19 քաղաքացիական գործով վճարված է եղել 8000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար, այսինքն՝ ներկայացված են եղել 2 հավասարագոր ոչ գույքային պահանջներ:

Օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից: Այս հոդվածի հիման վրա ներկայացված հայցադիմումն իր բնույթով վինդիկացիոն հայց է, քանի որ հայցադիմումը ներկայացվում է այն դեպքում, երբ անձը զրկված է իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքը տիրապետելու իրավունքից և նշված գույքը տիրապետում է ոչ սեփականատեր հանդիսացող անձ:

Օրենսգրքի 277-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թեկուզև այդ խախտումները գուգորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետ: Սա էլ իր բնույթով վինդիկացիոն հայց է, այսինքն՝ գույքի սեփականատեր հանդիսացող անձը զրկված չէ տիրապետման իրավունքից, սակայն զրկված է օգտագործման և տնօրինման իրավունքներից: Որպես նեգատոր հայց պետք է դիտարկել այն հայցերը, որոնք ուղղված են սեփականատիրոջ իրավագործությունների եռամիասնության իրականացման ապահովմանը:

Վերոգյալ վերլուծությունը թույլ տալիս փաստել, որ գույքը ուրիշի ապօրինի տիրապետումից հետ վերադարձնելու վերաբերյալ պահանջը (Օրենսգրքի 274-րդ հոդված) հանդիսանում է վինդիկացիոն հայց, իսկ բնակարանից վտարելու պահանջը (Օրենսգրքի 277-րդ հոդված)՝ նեգատոր հայց: Եթե ներկայացվել է բնակարանից վտարելու պահանջ, ապա ենթադրվում է, որ գույքի սեփականատերը զրկված է այդ գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավագործություններից: Սեփականության իրավունքը, որպես սահմանադրորեն երաշխավորված իրավունք, սահմանափակման ենթակա չէ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Գույքի սեփականատերը պետք է հնարավորություն ունենա ազատորեն տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու իր սեփականությունը, իսկ պետությունը պետք է երաշխավորի սեփականության իրավունքի ցանկացած ոտնահարման դեպքում սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունը: Նշվածով է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ նեգատոր հայցի վրա չի տարածվում վաղեմության ժամկետի պահանջը:

Դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը, ինչպես նաև դիմողի նկատմամբ կայացված դատական ակտերի հիմքում դրված պատճառաբանությունների ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ դիմումն ակնհայտ անհիմն է և սույն գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են. ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը, բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Միաժամանակ, նույն օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը՝ 1) գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր: Այնուհետև, նույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում՝ սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում: Իսկ նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, ...: Սահմանադրական դատարանի 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշման համաձայն՝ Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս, ըստ ձևի ներկայացվող պահանջների կատարման հետ մեկտեղ անհրաժեշտ է նաև բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե անձի սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ է ակնկալվում սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում: Մասնավորապես, նշված որոշման համաձայն՝ «... դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել

և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր՝ ...: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար»:

Ողջ վերոգրյալի լույսի ներքո, դիմողի փաստարկների ուսումնասիրությունը վկայում է, որ վերջինս ոչ միայն չի ներկայացրել բավարար հիմնավորումներ վիճարկվող նորմի կամ դրա վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայում ձևավորված մեկնաբանության հակասահմանադրականության վերաբերյալ, այլ նաև իր՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտման և վիճարկվող դրույթի կամ դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ:

Արդյունքում, գտնում ենք, որ սույն գործի շրջանակում ներկայացված անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, իսկ գործի վարույթը ենթակա է կարճման:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- Քաղաքացի Վադինակ Ավետիքի Մնացականյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը ենթակա է կարճման:

 Recoverable Signature

Համակարգող՝

X Lyudvik Davtyan

Լյուդվիկ Դավթյան

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169